ՆԵԵՏ

1. Տե՛ր, լքված սիրտն իմ տխուր,
Բնությամբ՝ թույլ, անզոր,
Սրբության է ձգտում:
Տե՛ր, սովորեցրու ինձ ապրել,
Ապրել կյանք հավատքի,
Ապրել կյանք Քո սիրո:
Տե՛ր, ճնճղուկներ կերակրող Տե՛ր,
Սովորեցրո՛ւ ինձ տեսնել,
Երգել ալելուիաներ
Իմ սրտի մեջ՝ միայն Քեզ:

2. Տե՛ր, փոքր է սիրտն իմ անհագ,
Խիստ ծարավ, ուժասպառ,
Օգնության միշտ կարոտ:
Տե՛ր, ո՞վ է անձն այն արդյոք,
Որ կամքիդ համեմատ
Միշտ լինի ինձ օգնող:
Տե՛ր, դաշտի շուշանների պես,
Սովորեցրո՛ւ հոգ չանել,
Այլ երգել օվսաննաներ
Իմ սրտի մեջ միայն Քեզ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025